ԳՈՐԾ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1917

№ 11—12 ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

տպր. «Վերա» եղբ. Կարապետեանցների
Բագու, 1917

„ГОРЦЪ" № 11—12 Ноябрь—Декабрь
Лит., научн., общ. и полит. журналъ
Тип. «Вѣра» Баку, 1917.

ՅԳԿ-ԱՀ

ԳՈՐԾ

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1917

№ 11—12 ՆՈՅԵՄԲԵՐ—ԴԵԿՏԵՄԲԵՐ

տպր. «Վերա» Բդր. Կարապետեանններվ
Բագու, 1917

„ГОРЦЪ" № 11—12 Ноябрь—Декабрь
Лит., научн., общ. и полит. журналъ
Тип. «Вѣра» Баку, 1917.

ԲԱՑՈՒԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

„ԳՈՐԾ“

ԳՐԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԱՄՍԱԳՐԻ

1918 թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Ռուսաստան՝	կէս տարուայ	20 ռ.
Պարսկաստան, Եւրոպա և Ամերիկա	,, ,,	40 ռ.

Նիւթեր և բաժանորդագին ուղարկել հետեւեալ հասցէով
Баку, редакція «ГОРЦЪ», Николаевская 33.
Թիֆլիսի մեր գործակալն է Ծ. Թորգոմեան, որի հասցէն է՝ Абасъ-Абадская площадь № 7.

Ի ԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՀԻՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻ

1. Պարսկաստանի բաժանորդները այս տարուայ վերջին համարները ստանալու համար պէտք է վճարեն պակաս մնացած բաժանորդագինը.

2. Կէս տարուայ բաժանորդները չտապեն ուղարկել II կիսամեակի բաժանորդագինը., այլապէս չեն ստանայ «Գործ»-ի վերջին համարները

3. Հասցէ փոխելու համար պէտք է ուղարկել 1 ռուբլի, իսկ պատասխանի համար 15 կ. Նամակագրշմ, հակառակ պարագային նամակները անպատասխան կը ձգան։

ГСС Библиотека
ZUUՈ-Арм.ССР
им. А. Мясницяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ
1674-55

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա. ՄԱՍ

1. *Լ. ԱԹԱԲԷԿԵԱՆ* Ազատամբութիւն (*Շարունակ*) . . . . . *5 երես*
2. *Հ. ԱՐՏՈՒՐ.* Ջեր մը . . . . . *13* »
3. *ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ* Քառեակներ . . . . . *38* »
4. *Ծ. ԹՈՐԳՈՄԵԱՆ* Բնութիւն . . . . . *39* »
5. *Ծ. ԹՈՐԳՈՄԵԱՆ* Կին մը . . . . . *53* »
6. *ԱԼՖՐԷԴ ԴԸ ՄԻՒՍԷ* Մայիսեան գիշերը (*Թարգմ. ՀՐԱՉ. ՉԱՐԴԱՐԵԱՆ*) . . . . . *72* »
7. *Վ. Ի-ՎԱՆ* Ցավակից ժպիտը . . . . . *78* »
8. *Հ. ՀԱՄԲԱՐՁՈՒՄԵԱՆ* Երկիւղ ու ատոյեր . . . . . *88* »
9. *Ե. ՉԻՐԻԿՈՎ* Կեանքի ճամբին (*Թարգմ. ՉԱԻԱԽԵՑԻ*) . . . . . *86* »
10. PHENIX՝ *Առձակ երգեր* . . . . . *114* »
11. *Յ. ԽԱՆԼԱՐԵԱՆ* Ձմրան երեկոյ . . . . . *121* »
12. *Վ. ՂԱԱՎԵԱՆ* Բանաստեղծութիւններ . . . . . *122* »
13. *ԼՏՆԱ՝* Բանաստեղծութիւններ . . . . . *124* »

Բ. ՄԱՍ

1. *Դ. ԱՆԱՆՈՒՆ* Երիզոր Առծրուճի . . . . . *1 երես*
2. *Մ. ՄԵՏԵՐԼԻՆԿ* Մաճը (թարգմ. տիկ. *ՉԱՊ. ԵՄԱՅԵԱՆ*) . . . *40* »
3. *Մ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ* Աշխարհաբարը եւ աշխարհիկ գրականութիւնը մինչեւ Ս. Պռոշեանը . . . . . *60* »
4. *Բ. ԻՇԽԱՆԵԱՆ* Ժողովուրդներէ տերիտարիական բաժանումները Անդրկովկասում . . . . . *89* »
5. *ԼԷՕ՝* Մեռոպ Թաղիադեան . . . . . *150* »
6. *ԻՊՊՈԼԻՏ ՏԷՆ՝* Գեղարուեստի փիլիսոփայութիւնը, թարգմ. *ՏԻԳ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ* . . . . . *153* »
7. *Ա. ՉԻԼԻՆԳԱՐԵԱՆ* Անդունդի մէջ . . . . . *172* »
8. *Դ. Ա.՝* Գարձեալ Անդրկովկասի վարչական բաժանումը . . . . *200* »
9. *Դ. Ա.՝* Գաբրէլ Մնացականեան՝ . . . . . *208* »
10. *ԼԷՕ՝* Մեսրոպ Թաղիադեան . . . . . *216* »
11. *ՎՐԻՊԱԿՆԵՐ* . . . . . *234* »

ԱՊԱՏԱՄԲՈՒԹԻՒՆ

(Հատուած)

Ատուածծ է մեռել,
երկինքն է փլել,
երկիրն է ճեղքուել,
թէ ովկիանոսն է տեղահան եղել։

Լեռների շուրջը
հողմը խօլական մի պար է պարում,
հևում է,
փնչում,
բարձր ծկլթում,
ապա վայնով,
սուգ ու շիւանով,
լալիւն-հեծիւնով
իջնում է դէպի խորխորատները,
խորաձորերը,
խորանդունդները
և ապա նորից
հազար ու հազար ճախրող թևերով
սարերն է թռչում
և նորից պարում պարը խօլական,
ծււում, ծկլթում,
հևում ու փնչում...

Եւ անծայրածիր անտառների մէջ
լորին ու շամին,
հացին ու քարդին
խոր ախ են քաշում, վայ-հարայ կանչում,
դրկում են իրար դողդոջ ճիւղերով
և բիւր վէրքերով ընկնում են գետնին։
Կաղնիները ամուր
ոքում են, անքում,

շաչում, շառաչում,
ճռռում, ճարճատում,
պարուրած կրծքով, կտրած ճիւղերով
տապալւում հողին,
և թռչունները խեղճ ու բնաւեր
յուսահատօրէն ծււում են, ճչում,
կտրած թևերով թափւում են տափին։

Հովիտների մէջ չինարները ձիգ՝
տարուբերւում են ամբողջ իրանով,
դիպչում են գետնին սուր կատարներով
և նորից ձգւում։

Հեղեղատները
ժայռեր են պոկում լեռնալանջերից
և թնդիւններով,
դղրդիւններով,
որոտաձիներով ու բոմբիւններով
վար են գլորում ժայռերն ամեհի,
փորում են հողը,
ծառեր են քարշում,
աւեր տարածում։

Բայց ահա քամին
դպչում է ծովին...
Ծովը
նախ մեղմիկ մրմունջ է հանում,
տրտունջ է անում,
յետոյ յուզւում է տակաւ առ տակաւ
և բողոքում է, և ըղաւում է խռոված ձայնով.
ապա՝
կատաղած՝
փքւում է, ուռչում,
թափահարում է բաշը փրփրած,
հազար ու հազար քաղցած վագրերի
անհեզադիմի մռնչիւններով զարկում է ափին,
ափը ողողում
և՝ յոգնած,
դադրած՝
կո է նահանջում,

ոյժեր ժողովում
ու նորից վազում դէպի ափերը
փրփրան բաշով,
վազրի առնոցով։

Հողմակոծ ծովի, անտառի նման,
հեղեղատների, մրրկի նման
անեղ է Մարդը այս սև պիշերին։

Մեծ քաղաքների ծխոտ ու մրոտ արուարձաններից
և արեգակի լոյսին, ջերմութեան մշտապէս կարօտ
փակուղիներից,
աղտոտ բակերից,
խոնաւ որջերից,
ներքնայարկերից,
անտուակութեան և ծախու սիրոյ գարշոտ վայրերից,
գործարաններից, գործանոցներից,
զօրանոցներից,
ածխահանքերից, նաւթաբուրգերից,
ճուլարաններից,
լեռնալանջերին մենակ կուչ եկած խղճուկ գիւղերի
մութ հիւղակներից,
հովիտների մէջ
լայնարձակօրէն փռուած շէնքերի և աւանների
նեղ խրճիթներից,
կէս ճամբին կանգնած կառափոքերից,
ծովափին հանգչող շոգենաւերից
լուռ
դուրս են սողում
դաւադիրների անծայր շարանները։

Լեռնաշղթայից մինչ լեռնաշղթայ
և ծովափերից մինչև ծովափեր
շարժուել է Մարդը
արնոտ հաւուցման այս սև պիշերին։

Հարթավայրերի այն ճամբաներով
և հովիտների ձիգ ուղիներով,
լեռնալանջերի առապարներով,
մութ անտառների արահետներով,

խորաձորերի նեղ շաւիղներով
շարժւում են ահա,
քայլում են ահա դէպի դաշտերը՝
բահ ու բրիչով,
գերանդիներով և մանգաղներով,
հորսելիներով ու եղաններով
արևառ, խոժոռ,
մունջ գիւղացիներ.
գազանակներով զինուած հովիւներ.
դուրով, աղոցով,
նիգով ու լինդով
և քլունգներով ու կռաններով
բիլտ ու յաղթակազմ արհեստաւորներ.
անթիւ, անհամար
սկանուա, ջլուա
մռայլ բանուորներ.
նաւթանօթներով և դանակներով ու շամփուրներով
հերարձակ մայրեր,
կաւագի քոյրեր և ամուսիններ.
գազազուած կանայք,
որոնք մինչև այդ
քաղցածութիւնից և մերկութիւնից սէր են վաճառել.
և նոյնպէս նրանք,
որոնք բանտերի և պալատների,
գաւառանների ու տաճարների
մուրքն են պահպանել.
հրացաններով, հրանիւթերով
զօրանոցներից փախած զինուորներ.
մեծ զօրագնդեր ու զօրաժասեր
առանց սպայի
ու զօրավարի.
և մրրիկների անխոնջ սիրահար
լուռ նաւաստիներ.
թևաւոր մաքով,
աշխարհահռչակ ու աշխարհածին հպարտ սրտերով
ժիր պատանիներ.
և նրանք նոյնպէս,
որոնք խոր հոգով ապրել են ցաւը բանուոր մարդկութեան,
որոնք եկել են բանուքեան ծոցից,

բայց և առել են
նենգ բռնութիւնը։

Եւ միլիոններով ու միլիոններով
քայլում են նոքա,
շարժւում են նոքա դէպի դաշտերը
և կուտակւում են
ու ամբոխւում են լայն դաշտերի վէջ,
լեռնաշղթայից մինչ լեռնաշղթայ
և ծովափերից մինչև ծովափեր։

Ամբոխն ամբոխին
աղաղակներով և կանչիւններով
ոդջոյն է տալիս.
ամբոխն ամբոխին
խրախուսանքի խօսքեր է ասում,
եռանդ է փչում,
ոգի է տալիս,
գործի է կանչում։
Դիպչելով իրար,
խառնուելով իրար,
ամբոխներն ամէն
տակաւ առ տակաւ բոցավառւում են,
հոսում են,
ծփում լաւայի նման։

Միլիոն ու միլիոն մարդկային սրտեր
միաժամանակ
կծկւում են, զարկում.
միլիոն ու միլիոն մարդկային կրծքեր
միաժամանակ
շնչում են, հեւում։
Մարդը մեռնում է։
Դաշտերի վերայ բիւր բերաններով
ոռնում է, գոռում
հեղեղատի պէս, մրրիկների պէս և ովկիանոսի պէս
հզօր ու դաժան
Տարրը մարդկային։
«Դէպի բուրգերը, դէպի բուրգերը անարգ բռնութեան։»
«Դէպ դղեակները, դէպ դղեակները նենգ իշխանութեան։»

«Դէպ ամբոցները, դէպ ամբոցները բռնակալների։»
«Դէպ բերդերը, դէպի բերդերը չար ոսոխների։»
«Դէպ քաղաքները, դէպ քաղաքները ցոփ հարստութեան։»

Եւ ահա, ահա,
հազար ու հազար արնոտ լոյսերով
ջահերն են վառւում սև դաշտերի մէջ.
բոցավառ նաւթը
հուր կաթիլներով ծափւում է գետնին,
գետինը ներկում
գեղին
ու կարմիր
և նարնջագոյն վայլուն բծերով։
Քամին խաղում է
ջահերից ելնող ծուխի և մուրի քուլաների հետ,
պատռում է նորանց,
ցրւում է նորանց,
կորցնում անհետ դաշտը պարուրող պաղ խաւարի մէջ։
Ջահերի շուրջը
մկանուտ հուժկու բազուկների մէջ
ցցուել են ահա
ալ-կարմիր ու սև
դրօշակների երկայն ձողերը.
փայլփլող լոյսի
գեղին ու կարմիր և նարնջագոյն շրջանների մէջ
փուում են, ծալւում
և նորից փուում ու նորից ծալւում
ալ-կարմիր ու սև այդ դրօշները։
Դրօշակները ժպտի են կանչում,
կարմիր ջահերը
ժահի և արեան հրաշունչ տենչով
Մարդկային Տարրի ուղեղն են կիզում։

Բայց ահա, ահա,
բոլոր դաշտերի բոլոր ծայրերից
արշալոյսի պէս լոյս հնչիւններով
և պատանեկան զիլ ցնծիւններով,
խրախուսանքի ահեղ կոչերով,
ջինջ ու թնաւոր ոգևորութեան մեղեդիներով
հնչեցին բոլոր մարտափողերը։

Ամուր բուրգերի ու դղեակների,
գոռ ամրոցների ու քաղաքների
ահազանգերը
բռնակալներին
դողդոջ ղօղանջով
բռնութեան անկման գոյժը երգեցին։

Բոլոր ծովերի բոլոր ափերից,
բոլոր գետերի բոլոր եղրերից
խռպոտ,
այլանդակ
և սպառնալից մռնչիւններով
մեծ արհաւիրքի և աւերածի
ողբը ոռնացին
շոգենաւերի շչակները անվերջ.
խելայեղօրէն
լացին,
ծուացին
բոլոր գիւղերի և քաղաքների սուլիչները պիլ.
տափարակների և հովիտների ամեն ծայրերից
բարձր վայիւնով,
հեծեծիւններով
և ընդհատ-ընդհատ խնդի քրքիջներով
շոգեկառքերը
ձայնակցեցին այդ ահեղ համերգին։

Եւ վայրկենաբար
ու մի վայրկեանով
Մարդկային Տարրը ցնցուեց
ու լռեց։

Այդպէս լռում են
ովկիանոսները փոթորկից առաջ,
այդպէս լռում են
և անտառները մրրկից առաջ։

Յետոյ
կամացուկ
տեղահան եղաւ
և ամբոխներով ու ամբոխներով ու ամբոխներով
շարժուեց ու քայլեց

դէպի բուրգերը անարգ բռնութեան,
դէպի դրահներըը նենգ իշխանութեան,
դէպի ամրոցները բռնակալների,
դէպի բերդերը չար ոսոխների,
դէպ քաղաքները ցոփ հարստութեան։

Եւ մըրիկների,
հեղեղատների,
շարժուող ծովերի ու անտառների
խօլ դաշնակցութեամբ
Մարդկային Տարրը
Սուրբ Ազատութեան դուռ Հիմը երդեց։

Լեւոն Ալթաբէկեան

Ռոստովի բանտ
1911-ի աշնան